

# ՀԻԼԱՐԻ ՔԼԻՆԹՈՆ

Հիլարի Քլինթոնը եղել է պետքարտուղար, սենատոր Նյու Յորքից, ԱՄՆ առաջին տիկին, Արկանզաս նահանգի առաջին տիկին, փաստաբան, իրավագիտության դասախոս, ակտիվիստ, կամավոր... սակայն առաջին բանը, որ նրա ընկերներն ու ազգականները կասեն նրա մասին այն է, որ նա երբեք չի մոռացել, թե որտեղից է սերում և ինչի համար է պայքարում:

Հիլարին հասակ է առել միջին խավի ընտանիքում՝ Չիկագոյի Փարք Ռիչ արվարձանում: Նրա հայրը՝ Հազը երկրորդ աշխարհամարտի վետերան էր, որ ծառայել էր նավատորմում և ուներ փոքր բիզնես՝ զբաղվում էր վարագույրների դիզայնով ու վաճառքով: Հիլարին, երբ ժամանակը ներում էր, օգնում էր ընտանեկան բիզնեսին:

Հազը հավատարիմ Հանրապետական էր, աշխատասեր ու խնայող անձնավորություն, ով ոչինչ չէր վատնում:

Հիլարիի մայրը՝ Դորոթին ծանր մանկություն էր ունեցել: Ծնողները մանուկ հասակում նրան լքել էին՝ թողնելով ազգականների խնամքին, ովքեր չէին ցանկանում հոգ տանել փոքրիկի համար:

14 տարեկանում Դորոթիի համար պարզ էր, որ ինքը պետք է իր համար ապրուստի միջոցներ վաստակի, ու նա սկսեց ավագ դպրոց հաճախելուն զուգընթաց կատարել տնտեսուհու ու դայակի աշխատանք: Մոր պատմությունը ոգեշնչեց Հիլարին, որպեսզի նա մշտապես և ամենուր հանդես գա ի պաշտպանություն երեխաների շահերի:

Հիլարիի մանկությունը շատ էր տարբերվում մոր մանկությունից: Նա հասակ

էր առնում միջին խավի կայուն ու ամուր ընտանիքում, հաճախում էր հանրակրթական դպրոց, աղջիկների սկսնակական շարժման անդամ էր: Հիլարին դաստիարակվել է մեթոդիստական եկեղեցու արժեքների հիման վրա: Ի դեպ, նրա մայրը դասավանդում էր կիրակնօրյա մեթոդիստական դպրոցում: Արժի նաև հիշատակել, որ եկեղեցու կազմակերպած էքսկուրսիայի ժամանակ Չիկագոյում Հիլարին առիթ ունեցավ լսել Մարտին Լյութեր Քինգի ելույթը, ինչն էլ նրան ոգեշնչեց իր ողջ կյանքը նվիրել սոցիալական արդարության համար մղվող պայքարին:

Ավագ դպրոցն ավարտելուց հետո Հիլարին հաճախել է Վելլի քոլեջ, որտեղ սոցիալական արդարության հարցերում նրա ակտիվ դիրքորոշումներն առավել վառ դրսևորվեցին: Ավարտելիս Հիլարին արդեն աչքի ընկնող ակտիվ ուսանող էր, ով իր համակուրսեցիների կողմից պատվիրակվել էր ավարտական միջոցառման ժամանակ խոսք ասել ուսանողների անունից, ինչը տեղի էր ունենում առաջին անգամ:

Քոլեջից հետո Հիլարին ուսումը շարունակեց Յեյլի իրավագիտության դպրոցում, որտեղ ավարտական կուրսում ընդամենը 27 աղջիկ կար: Այստեղ ուսանելու տարիներին Հիլարին սկսեց ժամադրվել կուրսեցիներից մեկի՝ Բիլ Քլինթոնի հետ:

Բուհն ավարտելուց հետո Հիլարին աշխատանքի չանցավ Նյու Յորքի կամ Վաշինգտոնի խոշոր իրավաբանական գրասենյակներից մեկում, այլ սկսեց աշխատել Երեխաների պաշտպանության հիմնադրամում և Մասաչուսեթսի Նյու Բեդֆորդ քաղաքում սնից տուն էր անցնում հաշմանդամություն

ունեցող երեխաների համար կրթական հնարավորությունների բացակայությունը փաստագրող պատմություններ ձեռք բերելու համար: Դրանք հիմք հանդիսացան, որ նահանգում հաշմանդամություն ունեցող երեխաների համար որակյալ կրթության հնարավորությունների երաշխավորման մասին պատմական օրենքի ընդունման համար:

Հանրային ծառայության ու հանուն մյուսների, հակապես՝ հանուն երեխաների ու ընտանիքների պայքարելու մղումն ու նվիրումը ուղեկցում են Հիլարիին իր ողջ կյանքի ընթացքում:

Նախագահ Նիքսոնի գործով կոնգրեսական հանձնաժողովում որպես իրավաբան մասնակցելուց հետո նա տեղափոխվեց Արկանզաս, որտեղ իրավագիտություն էր դասավանդում ու իրավական խորհրդատվություն էր ապահովում՝ ներկայացնելով խոցելի խմբերի անձանց շահերը: Նա Արկանզաս նահանգում երեխաների շահերի պաշտպանությամբ զբաղվող առաջին կազմակերպության՝ Հնտանիքի ու երեխաների պաշտպանների համահիմնադիրն էր:

1975թ. հոկտեմբերի 11-ին նա ամուսնացավ Բիլի հետ, հարսանեկան համեստ արարողությունը տեղի ունեցավ Ֆայեթվիլում (Արկանզաս):

Որպես նահանգապետի կին Արկանզասում Հիլարին կրթական ստանդարտների բարելավման ու առողջապահական ծառայությունների հասանելիության մեծացման ջատագովներից էր:

1980թ. ծնվեց նրա և Բիլի դուստրը՝ Չելսին:

1992թ. Բիլն առաջին անգամ նախագահ ընտրվեց, ապա վերընտրվեց 1996թ.:

Որպես առաջին տիկին Հիլարին առաջնորդում էր առողջապահական համակարգի բարեփոխումները, որպեսզի այն մատ-

չելի գներով հասանելի լինի բոլոր ընտանիքներին: Երբ ապահովագրական ընկերությունների և մյուս հետաքրքրված կողմերի ջանքերի արդյունքում այս նախաձեռնությունը ձախողվեց, Հիլարին չընկրկեց: Նա աշխատեց հանրապետականների և դեմոկրատների հետ երեխաների համար բժշկական ապահովագրության ծրագիր ձևավորելու շուրջ, որով ապահովագրական ծածկույթ ապահովվեց շուրջ 8 միլիոն երեխայի համար և կիսով չափ կրճատվեց ապահովագրություն չունեցող երեխաների քանակը:

1995թ. Հիլարին գլխավորում էր ԱՄՆ պատվիրակությունը կանանց հարցերով ՄԱԿ-ի 4-րդ համաժողովում, որը տեղի ունեցավ Պեկինում: Չնայած որոշ պաշտոնյաներ հորդորում էին չմասնակցել, նա մասնակցեց և հանդես եկավ ցնցող ելույթով՝ հայտարարելով, որ «մարդու իրավունքները կանանց իրավունքներն են, իսկ կանանց իրավունքները մարդու իրավունք են մեկընդմիջտ և բոլորի համար»: Իր ելույթով նա ոգեշնչեց կանանց աշխարհի տարբեր ծայրերում:

2000թ. Հիլարին ընտրվեց սենատոր:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներից հետո Հիլարիի ջանքերն ուղղված էին նրան, որ Բուշի վարչակազմը 20 միլիարդ դոլար հատկացնի՝ Նյու Յորքի վերակառուցման համար: Նա նաև պայքարում էր, որ արձագանքման ու փրկարարական աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց համար ապահովվեն առողջապահական ծառայություններ: Հիլարին աշխատում էր TRICARE-ի փաթեթի ընդլայնման շուրջ՝ բարելավելու բուժ-ծառայությունների հասանելիությունը պահեստազորայինների և ազգային գվարդիայի ծառայողների ու նրանց ընտանիքների անդամների համար:

Երբ Կոնգրեսը բավարար միջոցներ չէր ձեռնարկում գյուղական ու փոքր համայնքների

համար, Հիլարին չէր ընկրկում: Նա նորարարական մի գործընկերություն ձևավորեց Նյու Յորքում՝ eBay-ի և տեղի քոլեջների հետ, որի ներքո փոքր բիզնեսին տեխնիկական աջակցություն էր ցուցաբերվում, միկրովարկեր էին հատկացվում ու ուսուցումներ էին անցկացվում արտադրանքի վաճառքն առցանց կազմակերպելու վերաբերյալ: Նա օգնեց, որպեսզի լայնաշերտ ինտերնետային կապը հասանելի դառնա նահանգի հեռավոր բնակավայրերում և մեկնարկեց «Ֆերմայից ճաշի սեղան» նախաձեռնությունը, որն օգնում էր Նյու Յորք նահանգի ֆերմերներին իրենց գյուղատնտեսական ապրանքները վաճառել Նյու Յորքի ռեստորաններին, դպրոցներին, քոլեջներին և համալսարաններին:

2008թ. Հիլարին նախագահության թեկնածու էր, բայց երբ չառաջադրվեց, հանդես եկավ փայլուն ելույթով՝ շնորհակալություն հայտնելով իր աջակիցներին ու իր աջակցությունը հայտնելով սենատոր Բարաք Օբամային: Նա ակտիվ մասնակցում էր քարոզարշավին՝ երաշխավորելու դեմոկրատական թեկնածուի ներկայությունը Սպիտակ տանը:

Իսկ երբ նախագահ Օբաման առաջարկեց զբաղեցնել պետքարտուղարի պաշտոնն իր վարչակազմում, Հիլարին ընդունեց հանրային ծառայության այս առաջարկը:

Բուշի արտաքին քաղաքականության 8 տարիներից հետո աշխարհում Միացյալ Նահանգների դիրքը վերականգնելու հարցում Հիլարին առանցքային դերակատարում ունեցավ: Դա նկատել է նույնիսկ հանրապետական կուսակցության նախկին պետքարտուղարներից մեկը՝ Հենրի Քիսինջերը, ով ասել է. «նա ամենաարդյունավետ պետքարտուղարն է, որ ես երբևէ տեսել եմ»:

Նա կարողացավ կոալիցիա ձևավորել Իրանի նկատմամբ խիստ պատժամիջոցների կիրառման հարցում, միջնորդեց Իսրայելի ու Համասի միջև հրադադարի կայացմանը, որով վերջ դրվեց պատերազմին ու անվտանգության երաշխիքներ ապահովվեցին Իսրայելի համար: Նա ամբողջ աշխարհում հանդես էր գալիս որպես մարդու իրավունքների, ինտերնետի ազատության, կանանց, աղջիկների, ԼԳԲՏ անձանց և երիտասարդների իրավունքների ու հնարավորությունների եռանդուն առաջամարտիկ:

2014թ. Հիլարին ստանձնեց ևս մի դեր՝ Չեչենի դատեր՝ Շառլոտ Քլինթոն Մեզվինսկու տատիկի դերը, իսկ այս տարի հունիսին ծնվեց Շառլոտի եղբայր Այդան Քլինթոն Մեզվինսկին: Փոքրիկների հետ ժամանակ անցկացնելիս՝ Հիլարին, առավել քան երբևէ, հպարտ է ու երջանիկ: